ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ

ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ» ՍՈՑԻԱԼ-ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ

ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԽՈՒՄԲ՝ ԱՌՈՂՋ ԱՊՐԵԼԱԿԵՐՊ

ԹԵՄԱ՝ «ԿԱՐԾՐԱՏԻՊԵՐ, ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ և ԳԵՆԴԵՐԱԶԳԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ, ԳԵՆԴԵՐ-ԱՐՁԱԳԱՆՔՈՂ ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄ»

ՀԵՏԱԶՈՏՈՂ՝ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ՏԱԹԵՎԻԿ,

ՂԵԿԱՎԱՐ՝ ԻՍՈՅԱՆ ԹԱՄԱՐԱ

Բովանդակություն

Ներածություն……..3

Նպատակը, խնդիրները…….…….....5

Կարծրատիպեր…….....6

Գենդերային տարբերություններ և
գենդերազգայունություն…….13

Գենդերային հավասարություն…….…….23

Հետազոտություն……27

Եզրակացություն……29

Գրականության ցանկը…….....31

Ներածություն

«Մարդիկ տեսնում են սոսկ այն, ինչ

իրենք պատրաստ են տեսնել»

Ռալֆ Վալդո Էմերսոն

Հայտնի ճշմարտություն է, որ հասարակական գիտակցության փոփոխման արդյունավետ գործիքներից մեկը կրթությունն է: Հայաստանի Հանրապետությունն անցնում է պետականության կայացման և քաղաքացիական հասարակության կառուցման դժվարին ճանապարհ: Այս գործընթացում հսկայական է նոր սերնդի դաստիարակության կարևորությունը: Կրթության համակարգի խնդիրն է ակտիվ քաղաքացու ձևավորումը, ով նաև մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների արժեքների կրողը և ջատագովը կլինի: Այդ իսկ պատճառով կրթությունը պետք է միտված լինի ոչ միայն մտավոր կապիտալի կուտակմանը, այլև գիտակցության փոփոխմանը, ինչն իր հերթին կհանգեցնի համապատասխան փոփոխությունների հասարակական կյանքում:

Կրթության բովանդակությունն ընդգրկում է ոչ միայն զուտ գիտելիքներ, այլ նաև կարողություններ և հմտություններ, արժեքային համակարգ, վերաբերմունք, աշխարհայացք: Այս առումով մեծ պատասխանատվություն է դրված հանրակրթական դպրոցի վրա, որի գլխավոր նպատակներից մեկն անձի՝ որպես քաղաքացու ձևավորումն է: Ուստի վերոնշյալ խնդիրների լուծման կարևորագույն քայլերից մեկը կարելի է համարել այն, որ գենդերային բաղադրիչը գիտելիքների, հայացքների և արժեքային կողմորոշումների միջոցով ընդգրկվի կրթության բովանդակության և դպրոցի սոցիալական համակարգի մեջ:

Միևնույն ժամանակ օգնելու է գալիս նաև պետությանը՝ հասնելու կրթության ոլորտում իր իսկ կողմից սահմանված նպատակներից մի քանիսին, այն է՝ գենդերային մշակույթի ձևավորում, աջակցություն հասարակությունում գենդերային հավասարության, սոցիալական արդարության և սոցիալական ազատությունների

ձեռքբերմանը, գենդերային խտրականությունից և գենդերային բռնությունից զերծ հասարակության և կրթական միջավայրի ձևավորում:

Իրավիճակը կարելի է բարելավել երիտասարդ սերնդին համապատասխան գիտելիքներով զինելով, առողջ ապրելակերպին միտված ճիշտ դիրքորոշում ձևավորելով, ճնշումներին դիմակայելու, կշռադատված որոշում կայացնելու հմտություններ տալով: Անհատի դիրքորոշումը ձևավորվում է՝ հիմնվելով իր ունեցած տեղեկությունների, փորձի և օրինակների վրա: Նախաձեռնելով «Առողջ ապրելակերպ» դասընթացը՝ հույս ունենք պատանիներին զինել առողջ ապրելակերպին միտված վարքագիծ, վերաբերմունքներ և դիրքորոշումներ ապահովող անհրաժեշտ գիտելիքներով:

Համոզված ենք, որ երիտասարդ սերնդին համապատասխան զինելով, առողջ ապրելակերպին միտված ճիշտ դիրքորոշում և ապահով վարքագիշ ձևավորելով, ճնշումներին դիմակայելու, կշռադատված որոշում կայացնելու հմտություններ տալով՝ հնարավոր է շտկել դրությունը: Դեռահասության ընթացքում տեղի ունեցող ֆիզիկական փոփոխությունների և սեռականա, հոգեբանասոցիալական, մտավոր զարգացման ներդաշնակեցումը կհանգեցնի հասուն, պատասխանատու և ինքնաբավ անհատի ձևավորմանը:

«Միջին դպրոցում ուսուցումը նպատակաուղղված է առողջ ապրելակերպի, աշխարհի և բնության վերաբերյալ սովորողների գիտական պատկերացման ձևավորմանը, ինքնուրույն գործունեության համար անհրաժեշտ գիտելիքների նվազագույն ծավալի ապահովմանը»:

Ներկա իրավիճակն ու վիճակագրությունը հրամայական են դարձնում հասարակությունում գենդերային բռնության կանխումը՝ այդ թվում հասարակության իրազեկման ու իրավագիտակցության բարձրացման միջոցով:

Նպատակ

Մեր նպատակներն են՝

- պայքարել գենդերային խնդիրների և գենդերային բռնության դեմ՝ ներառելով այդ բաղադրիչն ուսումնական ծրագրերում, որը կնպաստի արական և իգական սեռի աշակերտների գենդերային հարցերի շուրջ իրազեկվածության բարձրացմանն ու կկոտրի առկա կարծրատիպերը,
- որ աշակերտները գիտակցեն, ճանաչեն տղաների և աղջիկների, կանանց ու տղամարդկանց նկատմամբ ժամանակակից հասարակության պահանջների տարբերությունները,
- որ աշակերտները հասկանան, որ իրենք «կերտվում» են որպես աղջիկ կամ տղա սոցիալական ազդեցությունների, հասարակության ակնկալիքների, սպասումների և ընդունված նորմերին համապատասխան,
- օգնել գիտակցել մասնակիցներին և ճանաչել իրենց բացասական ընկալումներն ու վերաբերմունքը հակառակ սեռի նկատմամբ,
- օգնել հարթել սեռերի միջև չգիտակցված ներքին կոնֆլիկտներն ու բյուր ընկալումները,
- խթանել երկխոսությունը սեռերի միջև:

Կարծրատիպեր

Դեռ մանկությունից պետք է սերմանել երկու սեռի գոյության անհրաժեշտության ու փոխլարցման գաղափարը, ընդգծել դրանց նշանակությունը, ցույց տալ, որ նրանք չեն կարող գոյատևել առանց մեկը մյուսի, և շատ կարևոր է, որ երկու սեռեն էլ օժտված լինեն հավասար իրավունքներով: Գենդերային հավասարություն նշանակում է հավասար իրավունքներ և հնարավորություններ երկու սեռերի համար, ոչ թե նրանց նույնսկ

«Գենդեր»՝ լատիներեն «genus», նշանակում է ծնունդ, ընտանիք, գեն և ցեղ: Գենդեր հասկացությունն առաջինը կիրառել է Կալիֆոռնիայի համալսարանի հոգեբանության պրոֆեսոր Ռոբերտ Ստոլլերը 1968 թվականին՝ նպատակ ունենալով առանձնացնել կնոջ և տղամարդու միջև ֆիզիոլոգիական տարբերությունը սոցիալ-մշակութայինից:

Գենդերային հատկանիշները ձեռքբերովի են պատմամշակութային համատեքստում և քարացած չեն, այսինքն՝ ժամանակի ընթացքում փոփոխվում են: Այսպես, օրինակ, 18-րդ դարում Ֆրանսիայում տղամարդիկ շպարվում էին, հագնում բարձրակրունկ կոշիկներ, զուգագուլպաներ և կրում կեղծամ, իսկ կանայք լայն ուռուցիկ շրջազգեստներ էին կրում: Մինչդեռ այժմ՝ չ տղամարդիկ, ոչ կանայք նման տեսք չունեն: Մեկ այլ օրինակ, նախկինում կանանց սոցիալական վիճակը թույլ չէր տալիս մասնակցել քաղաքական ընտրություններին, մինչդեռ այժմ կանայք դեյուրե հավասարապես կարող են նախագահ դառնալ կամ մասնակցել քաղաքական գործընթացներին:

Կանայք և տղամարդիկ նաև տարբեր են տարբեր մշակույթներում: Այսինքն՝ սոցիալական դերերը բնածին չեն, քանի որ այդ դերերի դրանքնույնը կլինեին բոլոր մշակույթներում: Այսպես, օրինակ, հայ կինը հասարակությունում ունեցած իր դիրքով, իրեն վերագրված վարքականոններով ու իրենցից ունեցած ակնկալիքներով զգալիորեն տարբերվում է կանադացի, թայլանդացի կամ պակիստանցի կնոջից:

Գենդերային հատկանիշներն անվանում են ձեռքբերովի, քանի որ և՛ տղաները, և՛ աղջիկները յուրացնում են այն վարքը, որն ընդունված է տվյալ հասարակության մեջ: Օրինակ՝ տղաներից ակնկալվում է, որ նրանք լինեն ամուր, զուսպ, ավելի ուժեղ, համառ, կոպիտ, նրանց սովորեցնում են զսպել հույզերը, լացել, ընտրել տեխնիկական կամ մոտավոր բարձր ունակություններ պահանջող մասնագիտություններ, իսկ աղջիկներից ակնկալվում է ավելի պասիվ, հարմարվող, զիջող, զգացմունքային վարքագիծ, նրանց սովորեցնում են լինել համեստ, ընտրել առավել ապես հումանիտար ուղղվածությամբ

Ի՞նչ է գենդերը

Գենդեր հասկացության մեկնաբանությունը և նշանակությունը:

Կինը և տղամարդը տարբերվում են իրարից, և այդ տարբերությունները բազմաթիվ են ու բազմաբնույթ: Սակայն կան տարբերություններ, որոնք պայմանավորված են կենսաբանական գործոններով, և կան տարբերություններ, որոնք կապված են հասարակության մեջ կնոջ և տղամարդու ունեցած դերերի, ակնկալիքների և վարքականոնների հետ:

Նպատակ ունենալով առանձնացնել կնոջ և տղամարդու միջև ֆիզիոլոգիական տարբերությունը սոցիալ-մշակութային կերտվածքից՝ առաջ քաշվեցին «սեռ» և «գենդեր» հասկացությունները:

Եթե **սեռ** հասկացությունը բնութագրում է կանանց և տղամարդկանց կենսաբանական, ֆիզիկական, ֆիզիոլոգիական և բնության կողմից տրվող այլ առանձնահատկությունները, ապա **գենդերը** մատնանշում է կնոջ և տղամարդու միջև առկա սոցիալական տարբերությունները և հասարակության կողմից նրանց վերագրված դերերի առանձնահատկությունները:

Սեռը կենսաբանական կատեգորիա է. Սեռի դեպքում մենք խոսում ենք կնոջ և տղամարդու մարմինների միջև կենսաբանական, ֆիզիոլոգիական տարբերությունների մասին: Օրինակ՝ կանանց մոտ՝ հղիության, ծննդաբերությամբ, կրծքով կերակրում, տղամարդկանց մոտ՝ բամբ ձայն, ավելի խիտ մազածածկույթ և այլն:

Գենդերը սոցիալական կատեգորիա է, հասարակության մեջ ամրագրված, կանանց և տղամարդկանց վերագրվող ընդունելի վարքագիծ: Այսինքն՝ դրանք այն հատկանիշներն են, ընկալումները, ակնկալիքներն ու վարքականոնները, որոնք ոչ թե բնությունն է տվել կնոջը կամ տղամարդուն, այլ հասարակությունը՝ տվյալ ժամանակահատվածում և տվյալ պատմամշակութային համատեքստում:

Օրինակ՝ տղամարդիկ ասոցացվում են «ուժեղ», «քաջ», «ընտանիքի հացը վաստակող» հատկանիշների հետ: Իսկ կանայք նույնացվում են «քնքուշ», «հնազանդ», «համեստ» հատկանիշների հետ: Սակայն այս հատկանիշները և վարքագծերը տղամարդուն և կնոջը չեն տրվել ի ծնե. Հասարակությունն է դրանք բաժանել՝ անվանելով «կանացիություն» և «տղամարդկություն»: Նման վարքագծերն ու սպասելիքները մարդիկ սովորում, յուրացնում և կիրառում են դեռ մանուկ հասակից՝ ընդօրինակելով իրենց ընտանիքի անդամներին, դաստիարակներին և ուսուցիչներին, հեռուստատեսությունում, գովազդներում առկա կերպարներին և, առհասարակ, շրջապատին:

Ի՞նչ է կարծրատիպը: Գենդերային կարծրատիպեր:

Կարծրատիպերը մարդկանց ու երևույթների մասին կարծրացած պատկերացումներն են, որոնք արմատավորվում են մարդկանց մտածելակերպում, վերածվում համընդհանուր կարծիքի և հեշտությամբ տարածվում են հասարակության մեջ: Կարծրատիպային կարող են լինել վարքագծի, սովորությունների, կենսակերպի մասին պատկերացումները /ամերիկացիները հարուստ են, ակնոց կրողները խելացի են, շիկահերները գեղեցիկ են, թուրքերը արյունարբու են և այլն/:

Գենդերային կարծրատիպերը տվյալ ժամանակահատվածում տվյալ հասարակության մեջ գոյություն ունեցող կայուն պատկերացումներն են տղամարդկանց և կանանց վերաբերյալ:

Գենդերային կարծրատիպերը յուրացվում են մանուկ հասակից, շատ կայուն են, դժվար են փոփոխվում, յուրացվում են նույնիսկ այն խմբերի կողմից, որոնց նկատմամբ ձևավորվել են: Գենդերային կարծրատիպերը գործում են ինչպես անհատական, այնպես էլ հասարակական մակարդակում: Տարածված գենդերային կարծրատիպեր են՝

Կինը ստեղծված է ընտանիքի համար:

Կանայք տղամարդկանցից թույլ են:

Ղեկավարելը տղամարդու առաքելությունն է:

Կանայք տեխնիկայից գլուխ չեն հանում:

Տղամարդու սիրտ տանող ճանապարհը անցնում է ստամոքսով և այլն:

Տարբեր հասարակություններ կարող են ունենալ տարբեր կարծրատիպեր՝ կախված ազգային առանձնահատկություններից, կյանքի պայմաններից, տարիքից,

կրթությունից և այլն: Կան նաև ունիվերսալ, ընդհանրական գենդերային կարծրատիպեր, որոնք հատուկ են ցանկացած աշխարհագրական և սոցիալական կտրվածքներին: Բոլոր հասարակություններում տղամարդու հետ նույնացնում են ուժ, իշխանություն, կայունություն, կերակրողի դեր, սպորտային վիճակ, իսկ կին գաղափարի հետ նույնականացնում են քնքշություն, թուլություն, հարմարվողականություն, պասիվություն, հոգատարություն, ամոթխածություն, զգացմունքայնություն հատկանիշները:

«Ձերծ պահիր ինձ քո կարծրատիպերից» սոցիոլոգիական հարցման համաձայն՝

- Կանանց 43.7%-ը և տղամարդկանց 56.6%-ը կարծում է, որ կինն է դրդում տղամարդուն իր վրա ձեռք բարձրացնել:
- Տղամարդկանց 60.4%-ը և կանանց 36.9%-ը կարծում է, որ կինը չի կարող լինել լավ ղեկավար:
- Հարցվողների 24.2%-ը կարծում է, որ եթե կինը զբաղված է կարիերայով, ապա խնդիրներ ունի անձնական կյանքում:
- Կանանց 63.8%-ը ափսոսում է, որ տղամարդ չի ծնվել:

Գենդերային կարծրատիպերի զոհեր կարող են լինել ինչպես կանայք, այնպես էլ տղամարդիկ: Շատ հաճախ գենդերային կարծրատիպերի հետևանքով մարդիկ չեն կարողանում ինքնարտահայտվել, մասնագիտական հաջողո զոհեր կարող են լինել ինչպես կանայք, այնպես էլ տղամարդիկ: Շատ հաճախ գենդերային կարծրատիպերի հետևանքով մարդիկ չեն կարողանում ինքնարտահայտվել, մասնագիտական հաջողությունների հասնել, կայանալ որոշակի ոլորտներում կամ ընտանիքում, փոխարենը դառնում են շրջապատի կարծրացած մտածելակերպի զոհ՝ գնալով որոշ զիջողությունների: Այդ պատճառով կարևոր է կարծրատիպերի դեմ պայքարելը և դրանք կոտրելը:

Գենդերային կարծրատիպերի արդյունքում ձևավորվում են **գենդերային նորմեր**, որոնք կանանց և տղամարդկանց վարքի որոշակի ընդունված կանոններ են: Գենդերային նորմերը պարտադրվում են մարդկանց՝ նրանց կենսաբանական սեռից

ելնելով՝ հասարակությունում իշխող պատկերացումներին և սպասելիքներին համապատասխան:

Ելնելով այդ պատկերացումներից՝ տղամարդիկ և կանայք կատարում են գենդերային դերեր, որոնք հասարակության կողմից կենսաբանական սեռին թելադրվող վարքի որոշակի մոդելներ են:

Կատարել այս կամ այն գենդերային դերը նշանակում է ունենալ տղամարդուն և կնոջը համապատասխան արտաքին տեսք, հագուստ, շարժուձև, խոսք, հասարակական կամ քաղաքական դիրք, ստանձնել հասարակության մեջ այդ գենդերին հատկացված գործառույթը:

Գենդերային խտրականությունը և դրա դրսևորման ձևերը

Գենդերային ուղղակի խտրականության ձևեր են՝

- Ընտանեկան դրության, հղիության և ընտանեկան պարտականությունների կատարման հիմքով խտրականությունը՝ ընտանեկան պարտավորվածությունների անհավասար բաշխումը, հղիության ստիպողական ընդհատումը, արգելքներն ու տաբուները կանանց համար և այլն:
- Սեռի հատկանիշով աշխատավարձի տարբերակումը՝ միևնույն կամ համարժեք աշխատանքի դիմաց տարբեր վարձատրությունը, աշխատանքի վարձատրության ցանկացած փոփոխությունը կամ աշխատանքի պայմանների վատթարացումը:
- Գենդերային բռնությունը, սեռական ոտնձգությունը: Սեռի հատկանիշով պայմանավորված անձի արժանապատվությունը նվաստացող, վախեցնող, ստորացնող խոսքային կամ ֆիզիկական դրսևորումներ ունեցող գործողությունները կամ իրավիճակը:

- Սեռի հատկանիշով ցանկացած վատ կամ անբարենպաստ վերաբերմունքը՝ միևնույն կամ նմանատիպ իրավիճակում:

Գենդերային անուղղակի խտրականության դրսևորում է՝

- Գենդերային կարծրատիպերի վերարտադրությունը զանգվածային լրատվությամբ, կրթության և մշակույթի միջոցով: Օրինակ՝ հեռուստատեսությամբ, գովազդներում, դասագրքերում, հեքիաթներում, ժողովրդական բանահյուսություններում, առակներում ու ասացվածքներում կարող են արտահայտվել, վերարտադրվել գենդերային կարծրատիխեր:

Գենդերային խտրականությունը հանգեցնում է կանանց և տղամարդկանց անհավասար ներկայացվածությանը, անհամաչափությանը կյանքի տարբեր բնագավառներում:

Գենդերային խտրականությունը մի գործելակերպ է, երբ տղամարդկանց և կանանց միջև սեռի հատկանիշով պայմանավորված տարբերակում է դրվում, և նախապատվություն է տրվում որևէ սեռի, ինչը հանգեցնում է նրանց իրավահավասարության սահմանափակմանը կամ վերացմանը:

Այդ նախապատվությունները կարող են լինել թաքնված կամ ամրագրված օրենքում. Վերջին դեպքում խոսքը բացահայտ խտրականության մասին է: Այսինքն՝ դե յուրե ամրագրված իրավունքները չեն բացառում դե ֆակտո խտրական վերաբերմունք և գործելակերպ:

Գենդերային խտրականությունը դրսևորվում է ուղղակի կամ անուղղակի ձևով:

Գենդերային տարբերություններ և գենդերազգայունություն

Գենդերային տարբերություններ, տարբեր գենդերների ներկայացուցիչների միջև տարբերությունները: Սովորաբար գենդերային տարբերությունների տակ հասկանում են տղամարդկանց և կանանց միջև տարբերությունները, թեև տարբեր մշակույթներում հանդիպում են գենդերային տարբեր հավաքածուներ: Ի տարբերություն «գենդերային» հասկացությանը, «գենդեր» հասկացությունը սոցիալական կատեգորիա է, ուստի գենդերային տարբերություններին իրենց իմաստով չեն վերաբերում, օրինակ, գենետիկայի և ֆիզիոլոգիայի տարբերությունները: Գիտության մեջ ընթանում են քննարկումներ այն մասին, թե կա՞ն արդյոք ճակատագրական գենդերային տարբերություններ: Ժամանակակից գիտական տվյալները ցույց են տալիս, որ ընդհանուր առմամբ տարբեր գենդերների ներկայացուցիչները գրեթե ամեն ինչում նման են միմյանց, իսկ գենդերային տարբերությունները շատ աննշան են: Չնայած դրան, ինչպես գիտության, այնպես էլ լրատվամիջոցների մեջ կա գենդերային տարբերությունների վերաբերյալ տեղեկատվությունը չափազանցնելու և գենդերային նմանությունները թերագնահատելու կամ դրանց մասին լռելու միտում:

1970-ական թվականներին գիտնականները հայտնաբերել են ընդամենը չորս պարամետր, որոնցով տղամարդկանց և կանանց միջև փոքր տարբերություններ են նկատվել: Վերջին հետազոտությունները հստակեցրել են այդ տվյալները և պարզել, որ խոսքի ունակությունների գենդերային տարբերություններ չկան: Մաթեմատիկական ունակությունների, տարածական ընկալման ունակությունների և ագրեսիվ վարքի հայտնաբերվող տարբերությունները մեծ չեն, և կան տվյալներ, որոնք ցույց են տալիս նրանց կախվածությունը գենդերային կարծրատիպերի ազդեցությունից:

Ի տարբերություն «սեռ» հասկացության, որը նկարագրում է մարդու կենսաբանական հատկանիշների ամբողջությունը, «գենդեր» հասկացությունը նշանակում է սոցիալական կատեգորիա: Գենդերային տարբերությունների տակ հասկանում են մարդկանց վարքագծի տարբերությունները, ասպիսով, դրանք չեն ներառում, օրինակ, գենետիկայի և ֆիզիոլոգիայի տարբերությունները: Այնուամենայնիվ, շատ հեղինակներ օգտագործում են «սեռ» և «գենդեր» բառերը որպես հոմանիշներ, կենտրոնանալով երկուական գենդերային համակարգի վրա, որտեղ անատոմիական սեռի հիման վրա մարդկանց վերագրվում է երկու գենդերային դերերից մեկը՝ տղամարդիկ կամ կանայք: Ինչպես նշում են որոշ հետազոտողներ, «սեռ» բառի օգտագործումը մարդկանց խմբերի միջև տարբերությունների վերաբերյալ ենթադրում է, որ այդ բոլոր տարբերությունները կենսաբանական սեռի ուղղակի հետևանք են, թեև նման ենթադրությունը առանձին ապացույցներ է պահանջում:

Չնայած նրան, որ երկուական գենդերային համակարգը գերիշխող է ժամանակակից աշխարհում, այն պատմականորեն բնորոշ է ոչ բոլոր մշակույթների աշխարհում:

Շատ մշակույթներում անատոմիական սեռն առանցքային դեր չի խաղում գենդերային դերը որոշելիս և առանձնանում է երեք կամ չորս գենդեր, այնպես որ նման մշակույթների գենդերային տարբերությունները միանգամայն այլ կերպ են իմաստավորվում: Որոշ մշակույթներում գենդերը ավանդաբար նշանակալի սոցիալական կատեգորիա չէ, և շատ ավելի մեծ ուշադրություն է դարձվում տարիքային տարբերություններին:

Գենդերային տարբերությունները վաղուց արդեն հետաքրքրություն են ներկայացնում տարբեր գիտական ոլորտների գիտնականների համար, և նրանց հետազոտության արդյունքները մեծ հետաքրքրություն են առաջացրել ԶԼՄ-ների և հանրության համար: Այս ոլորտում գիտական բանավեճերի հիմնական հարցն այն է, թե գոյություն ունեն արդյոք չվերականգնվող գենդերային տարբերություններ, որոնք կարող են հիմնավորել գոյություն ունեցող գենդերային դերերը և, մասնավորապես, այնպիսի միջոցառումների նպատակահարմարությունը, ինչպիսիք են տղաների և աղջիկների առանձին ուսուցումը: Ընդհանուր առմամբ, այսօրվա դրությամբ կուտակված գիտական գիտելիքները վկայում են այն մասին, որ տարբեր սեռերի ներկայացուցիչները միմյանց նման են գրեթե ամեն ինչում, շատ փոքրաթիվ և համեմատաբար աննշան բացառություններով: Չնայած դրան՝ գենդերային տարբերություններին շարունակում են մեծ նշանակություն տալ ինչպես գիտական միջավայրում, այնպես էլ նրա սահմաններից դուրս:

Գենդերային տարբերությունների վերաբերյալ գիտական բանավեճերի մասնակիցները բաժանվում են երկու հիմնական ճամբարի՝ կենսաբանական դետերմինիզմի կողմնակիցների, որոնք համոզված են կենսաբանական սեռի և գենդերային սերտ կապի մեջ, և սոցիալական կառուցողականության կողմնակիցների, որոնք կարծում են, որ գենդերային տարբերությունները նախագծվում են հասարակության կողմից: Գենդերային տարբերությունների մասին հարցը տարբեր ճամբարների ներկայացուցիչները սկզբունքորեն տարբեր կերպ են դնում: Կենսաբանորեն կողմնորոշված հետազոտողները հաճախ չեն հարցնում, թե արդյոք գենդերային տարբերությունները գոյություն ունեն որպես այդպիսին, և լռելյայն բխում են այն հանգամանքից, որ դրանք գոյություն ունեն և փնտրում են բացատրություններ: Սոցիալական կառուցողականության կողմնակիցները, իրենց հերթին, ուսումնասիրում են գենդերային կառուցվածքի գործընթացները տարբեր սոցիալական համատեքստերում և այն, թե ինչպես են գենդերային տարբերությունների մասին պատկերացումները օգտագործվում սոցիալական հիերարխիաների ստեղծման համար:

Շատ հետազոտողներ համաձայն են, որ մարդու այնպիսի հատկանիշների վրա, ինչպիսիք են ճանաչողական ունակությունները, ազդում են և՛ կենսաբանական, և՛ սոցիալական գործոնները: Ընդ որում, նրանք նշում են, որ ոչ բոլոր կենսաբանական գործոնները պետք է հասկանալ որպես բնածին, քանի որ, օրինակ, ուղեղի կառուցվածքը և գործունեությունը փոխվում են կյանքի փորձի ազդեցության տակ:

Արդյոք հաշվի են առնվում գենդերազգայուն խոսքը և հաղորդակցությունը

Գենդերազգայուն բովանդակությունը նշանակում է առարկայի կոնկրետ բովանդակության մեջ գենդերային հավասարության բաղադրիչի ներառման ապահովում: Դա կարող է նշանակել ոչ միայն կանանց և տղամարդկանց միջև անհավասար իրավահարաբերությունների հստակ արգելք, այլև միջոլորտային մոտեցման ապահովում, ներառելով նաև տարբերակման այլ հիմքեր, որոնք կարող են առնչակվել սեռի և գենդերի հետ: Հարկ է ներդնել գենդերազգայուն կառուցվածքներ: Դրան հարկ կլինի աջակցել ինչպես պարբերական վերլուծությամբ, մշտադիտարկմամբ ու գնահատմամբ, այնպես էլ համարժեք ռեսուրսներով, ինչպես նաև գենդերի կարևորությանը տեսանելիություն և օրինականություն հաղորդելու միջոցով:

Գենդեր-արձագանքող դասավանդում

Դասընթացի անցկացման համար ընտրված մեթոդը

Դասավանդման ժամանակ օգտագործվող բազմաթիվ մեթոդներից յուրաքանչյուրն իր դերն ունի, իր առավելություններն ու թերությունները: Լավագույնը տարբեր մեթոդների համադրումն է, որը նաև ապահովում է դասի տեմպի փոփոխությունը՝ սովորողների հետաքրքվածությունը չթուլացնելու երաշխիք ստեղծելով: Սա դասն ավելի հետաքրքիր և պակաս հոգնեցուցիչ է դարձնում դասավանդողի համար ևս:

Դասավանդումն ավանդաբար առավել հաճախ իրականացվել է դասախոսության միջոցով: Դասախոսությունն ապահովում է համեմատաբար կարճ ժամանակամիջոցում մեծ ծավալի նյութի հաղորդում: Սակայն այս դեպքում յուրացումը տուժում է, քանի որ պասիվ ունկնդրի ուշադրության կենտրոնումն աստիճանաբար թուլանում է: Հիմնականում լսածի 50%-ն անմիջապես մոռացվում է, հատկապես՝ եթե դասախոսությունը մատուցվում է միապաղաղ ձայնով: Բացի այդ, դասախոսը որևէ միջոց չունի պարզելու, թե իր հաղորդածը որչափով է յուրացվել:

Եթե ուսուցումը գլխավորապես հենվում է հիշողությանը, ուրեմն՝ դատապարտված է ձախողման: Մինչդեռ, յուրաքանչյուր ոք կարող է վկայել, որ գիտելիքները լավագույնս տպավորվում են, եթե դրա համար ինքներս ենք ջանք գործադրում: Մարդիկ ավելի լավ են սովորում, երբ զգում են, որ իրենք են կառավարում ուսուցման գործընթացը և ունեն սովորելու շարժառիթներ: Քանի որ դասավանդողը ժամանակ առ ժամանակ կարիք կունենա դասախոսելու, նա պետք է զգուշանա «ծուղակն ընկնելուց»: Աշխատեք սահմանափակել դասախոսության տևողությունը՝ ընդմիջելով կարճատև քննարկումներով կամ ակտիվ վարժություններով, որոնք կլրացնեն և կլուսաբանեն ասվածը: Այսկերպ կփոփոխվեն դասի տեմպն ու ոճը:

Դասավանդումն ինտերակտիվ մեթոդներով անցկացնելիս դասավանդողը կենտրոնական դեմքից վերածվում է օժանդակողի, ուղղություն ցույց տվողի: Նրա նպատակն է՝ լսարանում ստեղծել սովորելու համար առավել նպաստավոր՝ փոխադարձ վստահությամբ մթնոլորտ: Անմիջական, ինքնավստահ, բայց և նրբանկատ, խրախուսող ուսուցիչը նպաստում է երեխաների խանդավառ, անկաշկանդ լինելուն՝ ապահովելով ակտիվ ներգրավվածություն: Լսարանում փոխադարձ վստահության մթնոլորտի է՛լ ավելի է կարևորվում խնդրո առարկա դասընթացի ժամանակ, որը մասնակիցներից նրբանկատ թեմաների շուրջ քննարկումներ է պահանջելու:

Սովորողների յուրացումը խթանելու համար հարկավոր՝

- Ապահովել, որպեսզի նրանք իրենց զգան ներգրավված և կարևորված՝ սա նրանց շարժառիթ կտա
- Օգնել գիտակցել ուսուցանվող նյութի կարևորությունը.նրանք պետք է հավատան, որ տվյալ գիտելիքներն իրենց պետք են գալու կյանքում
- Հարգել և խրախուսել սովորողների անհատականությունը
- Նոր նյութ մատուցելիս ապահովել շարունակականությունը՝ դա կապելով արդեն յուրացված տեղեկություններին և հմտություններին:

Գործնական վարժություններով հագեցված դասերը կնպաստեն յուրացրածը հետագայում կիրառել կարողանալուն՝ կոնկրետ իրավիճակներին հարմարացնելով:

Ցանկացած դասի ընդհանուր նպատակն է.

- Սովորել շարժառիթներ տալ
- Տեղեկություն տալ
- Խթանել միտքը
- Դիրքորոշում ձևավորել
- Ապահովել հետաքրքիր ժամանց

Մի քանի խորհուրդ՝ ինտերակտիվ մեթոդով դասավանդողին

Ուսուցման, ինչպես և մարդկային փոխհարաբերությունների զարգացման հիմքում ընկած են արդյունավետ հաղորդակցությունը և ինֆորմացիայի ազատ փոխանակությունը:

Արդյունավետ հաղորդակցման կարևորագույն պայման է լսելու ունակությունը:

- Թույլ տվեք, որ մարդը խոսի: Կարելի է հետաքրքությունն ու մտահոգությունն արտահայտել ոչ խոսքային վարքագծով:
- Կարճ արտահայտություններով քաջալերեք խոսողին՝ ցույց տալով, որ ըմբռնել եք ասածը.օրինակ՝ «ըհը», «հըմմ», «հասկանալի է»:
- Գործածեք արտահայտություններ, որոնք անձին կքաջալերեն ընդարձակվել տվյալ նյութի շուրջ.օրինակ՝ «ես կցանկանայի ավելին լսել», «իսկապե՞ս», «ինչ եք ասում», «այ քեզ բան»:

Լսարանի արձագանքին ուշադրությամբ հետևելով՝ իրազեկ կլինեք, թե քննարկվող հարցերը որքանով են ընկալվել: Աշխատեք ըմբռնել ենթատեքստը, բաց մի թողեք հնչած նոր գաղափարները կամ անսովոր ընկալումները, որսացեք թաքնված լարվածությունը կամ շփոթությունը և, որ ամենակարևորն է, աշխատեք կառավարել ձեր հույզերը. Քննադատության պարագայում մարդիկ հակված են պաշտպանողական դիրք բռնելու: Զգույշ եղեք. Ժխտական խոսքային կամ ոչ խոսքային ակնարկներով մի կաշկանդեք մասնակիցների ազատ արտահայտվելը:

Դասավանդողի համար ձայնի տոնը նույնքան կարևոր է, որքան գործածած բառերը: Ձայնն արտահայտիչ դարձնելով, խանդավառություն ու հետաքրքրություն ցուցաբերելով՝ կարելի է ստեղծել սովորելու համար հաճելի մթնոլորտ: Սակայն պետք է իմանալ, որ ինչպես շարժուձևը, այնպես էլ ձայնի բարձրությունը և ելևէջները կարող են արտահայտել ավելին, քան մենք ցանկանում ենք, այդ թվում՝ բացասական հույզերը և լարվածությունը: Կոպիտ կամ հովանավորող-զիջողամիտ տոնը կարող են նույնքան վրդովեցուցիչ լինել, որքան՝ որևէ քննադատական դիտողություն:

Դասավանդողը վարժությունը տեսնում է բոլորովին այլ կերպ, քան սովորողները: Նրանք չգիտեն՝ ինչ սպասեն վարժությունից, կամ՝ որն է այս կամ այն վարժության նպատակը: Հարկ է հստակ և մանրակրկիտ բացատրել վարժության ընթացքում իրենց անելիքները: Երբեմն, քանի դեռ չեն հասկացել դրանցում թաքնված իմաստը, սովորողներին կարող է թվալ, թե վարժություններն անհեթեթ են կամ չափից դուրս մանկական: Երբեմն դժկամ մասնակիցները, մյուսների ոգևորությունը տեսնելով, իրենք էլ են խանդավառվում և վստահություն ձեռք բերում:

Վարժությունն ավարտելուց հետո բավարար ժամանակ պետք է թողնել ամփոփիչ քննարկման համար: Մասնակիցներին ձեր եզրահանգումները պարտադրելու փոխարեն՝ իրենց սեփականը ձևավորելու հնարավորությունը տալ: Հարցերը նախօրոք պատրաստեք:

Հիշեք, որ առաջնահերթ աշխատանքի քանակը չէ՝ որակն է: Եթե ժամանակը սահմանափակ է, ավելի լավ է լիարժեք կատարել մեկ վարժություն, քան հապճեպ երեք:

Արձագանքների կարևորությունը

Եթե սովորողները որևէ բան լավ են անում, իսկ դուք դա չեք նկատում, ապա նրանք ի վճակի չեն լինի իրենց կատարածն ամրապնդել: Նրանց ջանքերի չգնահատմամբ և աննրբանկատ քննադատությամբ վիրավորելը հեշտ է:

- **Արձագանքեք հնարավորինս շուտ:** Մի՛ սպասեք՝ մինչև սխալը կամ հաջողությունը կրկնվի:

- **Դիտողությունները սահմանափակեք** լավ կամ վատ կատարման միայն երկու կամ երեք կողմերի շուրջ: Սահման գոյություն ունի, թե մենք որքան բան կարող ենք ընկալել միանգամից:
- **Սխալներն անմիջապես ինքներդ մի՛ ուղղեք:**
- **Գովեք՝** նախքան ժխտական դիտողություններ անելը: Որքան էլ կատարումը վատ լինի, կգտնվի մի բան, որ արժանի է գովեստի: Ամրապնդե՛ք մասնակիցների ինքնագնահատականը:
- **Քննադատեք կատարումը, ոչ թե անձին:** Այնպե՛ս արեք, որ քննադատությունը չվիրավորի արժանապատվությունը, այլ խրախուսի ուղղել սխալը:

Գենդերային հավասարության ցուցանիշները մարդկային զարգա ցման ցուցանիշները վկայում են, որ որոշ ասպարեզներում Հայաստանը դրական ցուցանիշներ է արձանագրում՝ միաժամանակ ետ մնալով այլ ասպարեզներում: Բոլոր ժամանակներում էլ առկա են եղել, նույնիսկ «Սասնա ծռեր» էպոսում:

1. Գենդերային փոխհարաբերությունները «Սասնա ծռեր» էպոսում
2. Զապել Եսայանի նամակը Անայիսին
3. Գենդերային դերակատարումները «Անահիտ» հեքիաթում

1.Գենդերային փոխհարաբերությունները «Սասնա ծռեր» էպոսում

«Սասնա Ծռերի» վերլուծության մեջ կծանոթանանք գենդերային դերերի բաշխման հետ, առաջնորդության գենդերային ընկալումների, սիրո խոստովանության առաջնահերթության նախապայմաններին:

Առնվազն երկու հազարամյակների վարքային նորմեր խտացնող այս էպոսի հերոսուհիների իրավական և սոցիալական աշխարհայացքները և աշխարհընկալումը ոչնչով չէին տարբերվում հերոսների՝ տղամարդկանց աշխարհայացքներից և աշխարհընկալումից: Էպոսի հերոսուհիներին օժտված են բարձր սոցիալական կարգավիճակով տղամարդկանց բացակայության ժամանակ նրանք պետության ղեկը վերցնում են իրենց ձեռքը՝ Դեղձուն Ծամը, Արմաղանը, Խանդութը, Գոհարը: Մասնավորապես Դեղձուն Ծամը յոթ տարի կառավարում է Սասունը.

«Թողնենք Քառսուն Ճուղ-Ծամ Դեղձուն կառավարի՝ Չուրի տղեք մեծնան»

Նրանք օժտված են նաև ֆիզիկական ուժով, խիզախ են, տղամարդկանց մենամարտի հրավեր են նետում, նրանց հետ մտնում են պայքարի մեջ:
«Գոհարն էլ էլավ մեյդան, կայնավ: Միեր որ գուրզ թալեց, Գոհար վերուց. Գոհար որ թալեց, Միեր վերուց: Մեկ մեկու չկարցան հաղթեն:»

Էպոսի հերոսուհիները գրագետ են, իմաստուն, ազատ.
«Խանդութ խանում իմաստուն, կարդացվոր էր.
Գիրք էդիր էնտեղ, գիրք կարդած…»

Հերոսուհիներից մեկը՝ Դեղձուն Ծամը, սիրո խոստովանության նամակ է ուղարկում Սանասարին՝
«…Էրազով ըզքեզ տեսեր եմ, արի ինձի առ.
Ինձի շատ դուր կգաս դու»

Էպոսի հերոսուհիները սիրո խոստովանություն անելիս կամ իրենց ներկայացնելիս կարևորում են սոցիալական կարգավիճակը, սեփական անձը բնութագրում են հետևյալ հատկանիշներով.
Խելացի *՝«իմ գլուխ՝ քանց էսա լիք կուժ լափ-լի՛ք է»*
Շնորհալի՝ *«Աստշու շնորհքով լցուկ եմ»*
Մաքուր, անաղարտ սրտով՝ *«իմ սի՛րտ՝ քանց էսա դատարկ կուժ սար-սու՛ր է»*
Մեծահոգիությունը և ազատությունը՝ *«Էնոր սրտիկ Քուռկիկ Ջալալու մեյդանն է, ընդրա սրտի լենք յոթ գազ է, իմ սիրտն քանց կաթն անարատ է»*
Խոսքի գեղեցկությունը՝ *«Էնոր բերան մեղրով բացած է»*
Յուրովի երանգապատումներն ունեն տարիքն առած հերոսների կերպարները: Ո՞վ է Հայոց էպոսում հանդես գալիս որպես իմաստության կերպար, ու՞մ են դիմում խորհուրդ ստանալու համար: Միանշանակ կարելի է ասել, որ մեծահասակներն են, և գենդերային տարանջատումն այստեղ ընդգրկված չէ:

Խորհուրդն ակնկալելու նպատակով դիմում են ինչպես տղամարդուն՝ Հալևորին, այնպես էլ կնոջը՝ Պառավին:

«Պապիկ, քեզի բերի էստեղ,

Որ դու անուն դնես մեր բերդին»

Արտատեր Պառավն, ըստ էության, Դավթի առաջին և ամենամեծ խորհդատուն է:

«Էդ վախտ արտատրե Պառավ ելավ դեմ Դավթին…

Պառավն ասաց.- Դավի՛թ, մեռնե՛մ քո արևուն, Մի բարկանա, կ՚էրթաս, քեզ բա՛ն ասեմ, նո՛ր գնա»

Էպոսը ինքին վկայություն է գենդերային հավասարության ու համամարդկային արժեքների ներաշխարհայնացման և առօրեական մակարդակով կիրառման մասին:

2. Զապել Եսայանի նամակը Անայիսին

Զապել Եսայան (1878-1943)

Զապել Եսայանը 20-րդ դարի հայ գրականանության ամենակարևոր գրողներից է: Նա հայտնի է նաև որպես հասարակական գործիչ և մարդու իրավունքների պաշտպան: Ունի մեծ թվով ստեղծագործություններ և հրապարակախոսություններ, որտեղ բարձրացնում է կանանց իրավունքների հարցը մարդու հիմնարար իրավունքների համատեքստում:

«Սիրելի և հարգելի տիկին

Մեծ հաճույքով և մեծ գնահատումով կարդացի Ձեր գեղեցիկ էջը «Շարժանկար»-ը *Անահիտ*-ի առաջին թվին մեջ: Ձեր բանաստեղծական տաղանդը ինձ ծանոթ է արդեն, և ավելորդ պիտի ըլլար որևէ կարծիք հայտնել արդեն իսկ նվիրագործված տաղանդի մը մեկ արտահակյտության մասին, եթե Ձեր այս վերջին հրատարակած արձակը ի հայտ չի բերեր նոր բովանդակության համար նոր ձև մը կերտելու Ձեր շատ հաջող փորձը: Ինչ որ շատ մը տարիքով երիտասարդներու համար անկարելի կը դառնա: Դուք հաջողեր եք իրականացնել անճիգ կերպով Ձեր հոգեկան, մշտատև երիտասարդության ուժով:

Այս առթիվ կհիշեմ դեպք մը, որ կ'ուզեմ Ձեզ պատմել իբրև գաղտնիք (երկու կիներ շատ բան կրնան իրարու պատմել)։ Հայտնի ֆրանսիացի անձանվորություն մը, որ մեծ պաշտոնով պիտի երթար Կիլիկիա, ինձ հետ տեսակցություն մը ունեցավ (տարիներ առաջ)։ Տեսակցություններ ունեցեր էր արդեն զանազան քաղաքական հայ դեմքերու հետ և, ի միջի այլոց, պատահմամբ օրիորդի մը հետ։ Պետք է ըսեմ, թե բավական հուսախաբ էր, եղած առաջարկություններուն անգործնականության համար։ Նկատելով, որ ավելորդ է բոլորովին քաղաքական խնդիրներ շոշափել, օգտվելով իմ փորձառութենես և Կիլիկիո մասին ունեցած անձամբ տեղեկություններես, խոսակցությունը մղեցի կարգ մը անմիջական և գործնական խնդիրներու շուրջ։ Մարդը ապշած բացականչեց. «Ինչպես կ'ըլլա, տիկի՛ն, որ կիները հայերու մեջ այսքան բանիմաց են և խելացի, իսկ...»։ Այն հայ օրիորդը, որ տեսեր էր շատ լավ տպավորություն ըրեր էր իր վրա։

Արդյոք նույն բա՞նն է նաև գրականության մեջ։ Ձեր «Շարժանկարը»-ը իր ձևի և բովանդակության մասնահատուկ գեղեցկությունով ինձ ներշնչեց այս մտածումը, երբ այնքան երիտասարդ գրիչներ դեռ կը հապաղին անդրջրհեղեղյան մանիներու մեջ։

Մեծապես ուրախ եմ իմ անկեղծ զգացումներս Ձեզ հայտնելով և այս առթիվ, սիրելի տիկի՛ն, կը խնդրեմ, որ ընդունիք սիրալիր բարևներս և հարգանքներս։

Ձերդ՝

Զապել Եսայան

1929, հունիս 12»

3. Գենդերային դերակատարումները «Անահիտ» հեքիաթում

«Գենդեր» հասկացությունը ըմբռնվում է հայ հասարակության կողմից որպես արևմտյան ներմուծում մեր բառապաշարում, որպես արտաքին՝ ուրեմն օտար մի հասկացություն, որն ըստ էության վտանգում է մեր մշակույթային, «ազգային» նորմատիվ համակարգը և ավանդույթները։ Հայ մշակութային գոհարների գրաքննադատական վերլուծությունը հնարավորություն է տալիս ըմբռնելու այն փաստը, որ գենդերային հավասարության, գենդերային փոխհարաբերությունների, աշխատանքի գենդերային բաժանման հարցերին անրադարձել են շատ վաղուց։ Ինչևէ այսօր էլ նրանք չեն կորցրել կարևորությունը, իսկ շատ դեպքերում գենդերային փոխհարաբերությունների տիրույթում ընկած մեր ավանդականը ավելի առաջադեմ երանգներ է ունեցել, քան մերօրյան։

«Անահիտ» հեքիաթում Ղազարոս Աղայանը կարողացել է ներկայացնել գենդերային փոխհարաբերություններում էգալիտար մոդելի գործունակությունը։ Այստեղ միաձուլվում են դրվագներ, որոնք վերաբերում են գենդերային մեթոդաբանության մեջ քննարկման դրված գրեթե բոլոր թեմաներին։ Ստորև ներկայացածված դիպաշարային օրինակները շատ դեպքերում գործողությունների և գենդերային

դերաբաժանումների միջոցով արտահայտում են ոչ միայն թեմաների միահյուսվածություն, այլև վառ ապացույց են երկչափանի կեցության համակապվածության:

Օրինակներ՝

«Հավասարություն»

«Հացիկ գյուղում թե՛ տղերքը, թե՛ աղջկերքը այնպես սրամիտ, այնպես գեղեցիկ են, որ եթե տեսնես, կմնաս հիացած»:

«Ուժեղ և թույլ սեռեր»

«Վաղինակը պարզել էր, որ գյուղի ծերերը Անահիտին են դիմում խորհրդի համար, նրան անվանում են «Անտառի թագուհի»: Իր հոր նախիրից երբ մի ապրանք է կորչում, նա իսկույն մի կրակոտ ձի հեծած սար ու ձոր է ընկնում, գտնում բերում է»:

*

«Անահիտը, ձախ ձեռքին վահանը, հանեց սուրը և պահանջեց բացել այդ տարտարոսի դռները: Թեժ կռվի ժամանակ սաղավարտն ընկավ Անահիտի գլխից և երկայն մազերը փռվեցին ուսերին: Դա ավելի սարսափ ձգեց ամբոխի վրա»:

«Աշխատանքի գենդերային բաժանում»

«Մեկ տարվա ***մեջ Վաչագանը դիպակ գործել սովորեց, մի բաճկոնացու գործեց*** *և ուղարկեց Անահիտին ընծա»:*

«Առաջնորդություն»

«Մի օր Անահիտը խորհուրդ է տալիս, որ Վաչագանը առաջվա պես ծպտված գնա ժողովրդի մեջ՝ նրանց վիճակին ծանոթանալու, ***իսկ ինքը այդ ընթացքում կկառավարի երկիրը****»:*

*

«Անահիտ թագուհին, ***որ Վաչագանի բացակայության ժամանակ լավ կառավարում էր երկիրը,*** *շուտով քրմի միջոցով ստանում է դիպակը, որի վրա ծածկագրված էր Վաչագանի գտնվելու տեղը»:*

*

«Թագուհին անմիջապես հնչեցրեց պատերազմական փողերը, ոտքից գլուխ սպառազինվեց: Նրան միացան նաև օրիորդներն ու տիկինները, որոնք նույնպես զրահավորվեցին ու ձի նստած շրջապատեցին թագուհուն, որպեսզի գնան թագավորին փրկելու: Անահիտը հրամաններ արձակեց, կարգավորեց այրուձին ու ասպանդակեց ձին»:

«Ավանդույթներ»

«Հայրն էլ նրան հանգիստ չէր տալիս և տարբեր հարսնացուներ էր առաջարկում շաբաթը մի քանի անգամ: Հոր պարտադրանքներից ազատ լինելու համար Վաչագանը իրեն տվեց որսորդության»:

«Նորամուծություններ»

«Թագավորն ու թագուհին տեսան, որ չեն կարողանում փոխել Վաչագանին, խորհուրդ արին և որոշեցին ընդունել նրա որոշումը»:

*

«Այսօրվա ծառաների տերը վաղը կարող է ինքը ծառա լինել: Ամեն մարդ արհեստ պիտի իմանա, - կտրուկ պատասխանում է Անահիտը և հարսնախոսության եկածներին իրենց նվերներով հետ դարձնում»:

*

«Անահիտը մեր գետերը ծածկեց լաստերով, մեր ծովերն ու լճերը՝ նավերով ու նավակներով: Նա մեր դաշտերը ողողեց ջրանցքներով ու առուներով, մեր քաղաքներն ու գյուղերը՝ սառն աղբյուրներով: Նա մեր սայլերին հարթ ճանապարհներ տվավ, մեր գութաններին՝ ընդարձակ երկիր: Նա կործանեց դժոխքը և մեր աշխարհը շինեց մի եդեմական դրախտ»:

Գենդերային հավասարություն

Գենդերային հավասարություն: Ինչու՞ է պետք պայքարել հանուն գենդերային հավասարության:

Գենդերային հավասարությունը նշանակում է տղամարդու և կնոջ հավասար իրավունքներ, պարտականություններ և հնարավորություններ:

Գենդերային հավասարությունը չի նշանակում տղամարդկանց և կանանց նույնականացում: Հավասարությունը ենթադրում է, որ կանացժնց ու տղամարդկանց իրավունքները, պարտականությունները և հնարավորությունները չպետք է պայմանավորված լինեն վերջիններիս տղա կամ աղջիկ ծնվելու փաստով:

Տղամարդու և կնոջ միջև հավասարությունը դիտվում է որպես մարդու իրավունքների խնդիր և հասարակության կայուն զարգացման նախադրյալ և ցուցանիշ:

Պետք է հիշել, որ գենդերային հավասարությունը միայն «կանանց խնդիրը» չէ.այն պետք է լիովին ներատի տղամարդկանց ևս:

2014թ.-ի դրությամբ՝ 195 երկրներից 143-ը սահմանադրությամբ երաշխավորում են կանանց և տղամարդկանց միջև իրավահավասարությունը:

Այդուհանդերձ, բոլոր երկրներում կանանց նկատմամբ խտրականությունը շարունակում է ուղղակի կամ անուղղակի կերպով գոյություն ունենալ կյանքի բոլոր ոլորտներում: Մասնավորապես, խտրականությունը դրսևորվում է՝

- Օրենքներում և քաղաքականություններում,
- Գենդերային կարծրատիպերի միջոցով,
- Հասարակական նորմերի և սովորույթների տեսքով:

Հարկ է հիշել, որ դե յուրե հավասարությունը դեռևս չի նշանակում հավասարության դե ֆակտո կիրառում: Այսինքն՝ հավասարության ամրագրումն օրենքներով դեռևս չի ենթադրում, որ կանայք և տղամարդիկ հավասար են գործնականում:

Գենդերային անհավասարությունը բացասական ազդեցություն է ունենում ոչ միայն կանանց ու աղջիկների, այլև տղամարդկանց և տղաների, երեխաների, ընտանիքների, համայնքների և հասարակության վրա:

Գենդերային հավասարությունը ենթադրում է հավասար իրավունքներ, հնարավորություններ և պարտականություններ և՛ կանանց, և՛ տղամարդկանց համար: Գենդերային հավասարությունն առաջին հերթին ամրագրված է ՄԱԿ-ի Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում, որը լինելով մարդու իրավունքների առաջին միջազգային փաստաթուղթը, սահմանում է կանանց և տղամարդկանց, աղջիկների և տղաների հավասարությունն օրենքի առջև և նրանց հակախտրականության իրավունքը: Հռչակագրում կիրառված է համընդհանուր լեզու, որում չկա սեռային տարաբաժանում:

Տղամարդկանց և կանանց հավասար իրավունքներն ու հնարավորություններն արտացոլող դրույթները՝ որպես համընդհանուր արժեքներ, ձևակերպված են նաև ՄԱԿ-ի Հազարամյակի հռչակագրում: Մասնավորապես, այդ արժեքներից «ազատությունը» սահմանում է, որ տղամարդիկ և կանայք ունեն իրենց կյանքն ապրելու և արժանապատվորեն մեծացնելու իրենց երեխաներին՝ զերծ սովից, բռնության ու ճնշման, անարդարության վախից: «Համերաշխություն» արժեքը զարգացնում է անաչառություն և սոցիալական արդարության սկզբունքները բոլորի համար, իսկ «հանդուրժողականությունը»՝ միմյանց նկատմամբ հարգանքը, այն գիտակցությամբ, որ մարդիկ տարբեր են, պետք է խրախուսել այս տարբերությունների գիտակցումն ու նպաստել նրանց միջև երկխոսությունը: Կարևորագույն արժեքներից է նաև «հավասարությունը» հետևյալ ձևակերպմամբ՝ տղամարդկանց և կանանց հավասար իրավունքներն ու հնարավորությունները պետք է ապահովված լինեն:

Այսպիսով՝ կանանց և տղամարդկանց իրավունքները հավասարապես պաշտպանված են մարդու իրավունքների մի շարք փաստաթղթերով, մինչդեռ կան նաև փաստաթղթեր, որոնք, հաշվի առնելով կանանց վերագրվող ավելի ցածր կարգավիճակը, վերաբերում են միայն կանանց, և միտված են պաշտպանելու

վերջիններիս իրավունքները: Նման փաստաթուղթ է ՄԱԿ-ի «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվեկցիան»:

Հետազոտություն

Հետազոտությունները վկայում են, որ ամենից լավ տպավորվում են այն գիտելիքները, որոնք ձեռք են բերվել անձնական փորձով, կամ սեփական կշռադատման, վերլուծության և եզրահանգման արդյունք են: Անհատի դիրքորոշումը ձևավորվում է՝ հիմնվելով իր ունեցած տեղեկությունների, փորձի և օրինակների վրա:

Սովորողների յուրացումը խթանելու համար հարկավոր է՝

- Օգնել գիտակցել ուսուցանվող նյութի կարևորությունը: Նրանք պետք է հավատան, որ տվյալ գիտելիքներն իրենց պետք են գալու կյանքում: Սա նրանց սովորելու առիթ կտա:
- Ապահովել, որպեսզի նրանք իրենց զգան ներգրավված և կարևորված: Սա կնպաստի, որպեսզի հաճույքով աշխատեն: Իզուր չէ ասված, եթե ուզում ես, որ գիտելիքը լավ մարսվի, պետք է այն հաճույքով կուլ տաս:
- Հարգել և խրախուսել սովորողների անհատականությունը:
- Նոր նյութ մատուցելիս ապահովել շարունակականությունը՝ հիմնվելով արդեն յուրացված տեղեկությունների և հմտությունների վրա:

Դասընթացը չի ենթադրում երեխաներին պատրաստի կարծիքների պարտադրել, այլ թույլ է տալիս, որ նրանք իրենց հանգեն իրենց ճշմարտությանը՝ սեփական հետազոտությունների, կշռադատումների, եզրահանգումների արդյունքում: Գործնական վարժություններով հագեցած դասերը կնպաստեն յուրացրածը հետագայում կոնկրետ իրավիճակներում կիրառել կարողանալուն:

Դասավանդման համար առաջարկվող բազմաթիվ մեթոդներից յուրաքանչյուրն իր տեղն ունի, իր առավելություններն ու թերությունները: Լավագույնը տարբեր

մեթոդների համադրումն է, ինչը նաև կապահովի դասի տեմպի փոփոխության՝ սովորողների հետաքրքրությունը չթուլացնելու երաշխք ստեղծելով:

Ինտերակտիվ մեթոդները սովորողներին հնարավորություն են ընձեռում փորձի, իրավիճակների վերլուծության, բանավեճերի, կարծիքների փոխանակման միջոցով խորացնել գիտելիքները, հստակեցնել սեփական ընկալումները, դիրքորոշում ձևավորվել՝ նպաստելով ուսումնառության արդյունավետությանը:

Դասերի ընթացքում պետք է բոլորին քննարկումներին ակտիվորեն մասնակցելու, խնդրոառարկայի շուրջ մտքեր փոխանակելու, սեփական փորձը վերլուծելու և եզրահանգումներ անելու հնարավորություն տրվի:

Այս տեսանկյունից՝ առաջարկում ենք աշխատանքի կազմակերպման հետևյալ եղանակները.

- Անհատական և խմբային աշխատանքներ
- Բանավեճեր, քննարկումներ
- Կարծիքների ամփոփում և եզրահանգում
- Թեստերի և հարցաշարերի անցկացում

Եզրակացություն

Վերոնշյալ դիրքորոշումներին և գործողություններին վերաբերող վստահելի և ամբողջական տվյալների հավաքագրումը որպես այդպիսին կարևոր է, քանի որ այն տալիս է ընթացիկ իրադրության իրատեսական պատկերը, և որն ավելի կարևոր է, տվյալները ծառայում են որպես առաջընթացի չափման ուղենիշներ և հիմք են ստեղծում թիրախային և ավելի արդյունավետ գենդերային հավասարության քաղաքականության և ռազմավարությունների մշակման համար:

Ներկա իրավիճակն ու վիճակագրությունը հրամայական են դարձնում հասարակությունում գենդերային բռնության կանխումը՝ այդ թվում հասարակության իրազեկման ու իրավագիտակցության բարձրացման միջոցով:

Թեմայի նպատակն է պայքարել գենդերային խնդիրների և գենդերային բռնության դեմ՝ ներառելով այդ բաղադրիչն ուսումնական ծրագրերում, որը կնպաստի արական և իգական սեռի աշակերտների գենդերային հարցերի շուրջ իրազեկվածության բարձրացման և կկոտրի առկա կարծրատիպերը:

Դաստիարակության համակարգում նորի որոնումը անհրաժեշտ է, կարևոր ու պարտադիր: Չէ՞ որ այսօրվա դպրոցականը պետք է սովորի, աշխատի և ապրի ձևավորվող քաղաքացիական հասարակության մեջ, նոր գաղափարախոսության, շուկայական հարաբերությունների, ինֆորմացիոն տեղեկատվական տեխնոլոգիաների դարաշրջանում: Չէ՞ որ նորը դպրոցական հոգեբանության նորովի ըմբռնումն է, նրա վրա արդյունավետ եղանակներով ներգործելը:

Այսօրվա դպրոցականների առջև պետք է կանգնեն այնպիսի մարդիկ, որոնք կունենան կայուն մտածողություն, համոզմունքներ, վերլուծական, կազմակերպչական ընդունակություններ, հաղորդացման, ապրումակցման և խոսքի բարձր կուլտուրա:

Վերջին տարիների ընթացքում զգալիորեն աճել է ինֆորմացիայի հոսքը, որն էլ ազդում է դպրոցականների զարգացածության և դաստիարակվածության ընդհանուր մակարդակի վրա: Նրանք շատ բան գիտեն, շատ բանի են ձգտում և մեծ պահանջներ են դնում:

Օգտագործված գրականության ցանկ

1.Միավ/Ջիահ-ի կանխարգելում և անվտանգ վարքագծի ձևավորում. Դասընթաց հանրակրթական դպրոցների 8-9-րդ դասարանների աշակերտների համար- Երևան 2004

2.Կին և տղամարդ՝ տարբեր, բայց հավասար. Տեսական և գործնական ուղեցույց- Երևան 2016

3.Հոգեբանության ներածություն. 8-րդ դասարան- Երևան 2001

4.Առողջ ապրելակերպ. Ուսուցչի ձեռնարկ, դասընթաց 10-11-րդ դասարանների համար- Երևան 2018

5.Հոգեբանություն. 9-րդ դասարան- Երևան 2000

6.Դասղեկ.Ռուզաննա Մուրադյան- Երևան 2007